



# ՍՈՒՐԲ ԶԱԿՈՒՄ

## ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՄԱՅՐ Ե ԿԵՂԵՑԻ

**Յիսուսի Չորրորդ Կրթակի**

17 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2023

### ԸՆԹԵՐՑՈՒՄ ԵՍԱՅԻ ՄԱՐԴԱՐԵՒ ԳԻՐՔԵՆ (38.1-8)

**Ա**յն օրերուն եղեկիա թագաւոր հիւանդացաւ եւ մահուան անկողին ինկաւ։ Եսայի մարգարէն, Ամոսի որդին, անոր քով եկաւ եւ ըստ «Տէրը այսպէս կ'ըսէ.- Քու տանդ համար կարգադրութիւն ըրէ՝ յաջորդդ նշանակելով, որովհետեւ կեանքիդ օրերը վերջացած են եւ մահդ մօտ է»։

Եղեկիա երեսը պատին դարձուց եւ այսպէս աղօթեց Տիրոջ. «Կ'աղաչեմ, ո՞վ Տէր, յիշէ թէ արդար եւ ուղղամիտ եղայ քու աչքիդ, եւ ըրի միայն այն ինչ որ հաճելի է քեզի»։ Եւ եղեկիա դառնօրէն լացաւ։

Այն ատեն Տէրը հրամայեց Եսայի մարգարէին, ըսելով. «Գնա՛ եւ եղեկիային ըսէ.- Այսպէս կ'ըսէ Տէրը, քու հօրդ՝ Դաւիթի Աստուածը. “Լսեցի աղօթքդ, տեսայ արցունքդ եւ ահա քեզի տասնըհինգ տարի եւս կեանք կու տամ։ Այլեւ Ասորեստանի թագաւորին ձեռքէն պիտի ազատեմ թէ՛ քեզ եւ թէ՛ այս քաղաքը, Երուսաղէմը, որ անձամբ պիտի պաշտպանեմ”։ Եւ որպէսզի գիտնաս թէ Աստուած իր խոստումը պիտի կատարէ, Տէրը հետեւեալ նշանը կու տայ քեզի։ Տե՛ս, քու հօրդ՝ Աքազի արեւու ժամացոյցին ստուերը տասներորդ աստիճանին վրայ ինկեր է հիմա. բայց Տէրը զայն տասը աստիճան

ետ պիտի դարձընէ»։

Եւ իրապէս, ստուերը իր ինկած տեղէն տասը աստիճան ետ գնաց։

**ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ  
ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐՈՒՆ ԳՐԱԾ  
ՆԱՄԱԿԻՆ  
(1.1-14)**

**Ա**նցեալին բազմաթիւ անգամներ եւ բազմաթիւ կերպերով Աստուած մեր հայրերուն խօսեցաւ մարգարէներուն միջոցաւ, իսկ այս վերջին օրերուն մեզի խօսեցաւ իր Որդիին միջոցաւ։ Աստուած զինք ամէն բանի ժառանգորդ կարգեց եւ անոր միջոցաւ էր, որ տիեզերքը ստեղծեց։ Որդին, Հօրը փառքին լոյսը եւ անոր էութեան ճշգրիտ պատկերը, որ իր խօսքին զօրութեամբ տիեզերքը կը պահէ, իր անձով մեր մեղքերը սրբելէ ետք՝ երկինքի մէջ նստաւ Աստուծոյ՝ Գերագոյն Զօրութեան աջ կողմը։

Անշատ աւելի բարձր է հրեշտակներէն, ինչպէս Աստուծմէ իրեն տրուած անունը ցոյց կու տայ. որովհետեւ ո՞ր մէկ հրեշտակին երբեւիցէ Աստուած ըստաւ. «Թուն իմ որդիս ես, այսօ՛ր ֆեզ ծնայ»։ Կամ որո՞ւ ըստաւ. «Ես անոր հայր պիտի ըլլամ եւ անիկա՛ ինձի որդի»։ Դարձեալ, երբ իր անդրանիկ Որդին աշխարհ կը դրկէր, ըստաւ. «Աստուծոյ բոլոր հրեշտակները թող պաշտեն զայն»։

**Աստուած իր հրեշտակներուն մասին  
խօսած ատեն կ'ըսէ.**

«Աստուած իր հրեշտակները ստեղծեց  
որպէս պատգամաւոր հոգիներ, եւ իր  
պաշտօնեաները՝ կրակի բոցի պէս»:

**Մինչդեռ Որդիին կ'ըսէ.**

«Քու աթոռդ, ո'վ Աստուած, յաւի-  
տենական է. արդարութեամբ կ իշխես  
քազաւորութեանդ վրայ: Արդարութիւնը  
կը սիրես եւ անիրաւութիւնը կ ատես: Ահա  
թէ ինչու, ո'վ Աստուած, քու  
Աստուածդ ուրախութեան իւղով օծեց  
քեզ քու ընկերներէդ աւելի»:

**Դարձեալ, ուրիշ տեղ մը Որդիին կ'ըսէ.**

«Դուն, ո'վ Տէր, սկիզբէն ստեղծեցիր  
երկիրը, եւ երկինքը քու ձեռագործդ  
է: Անոնք պիտի կորսուին. բայց դուն  
կաս եւ կը մնաս: Անոնք հագուստի  
պէս պիտի մաշին. վերարկուի մը պէս  
պիտի ծալլես զանոնի եւ հագուստի պէս  
փոխես: Բայց դուն միշտ նոյնն ես եւ  
քու տարիներդ վերջ պիտի չունենան»:

**Բայց հրեշտակներէն որո՞ւն ըսաւ  
երբեք.**

«Աշ կողմս նստէ, մինչեւ թշնամիներդ  
ոտքերուդ տակ դնեմ որպէս պատուան-  
դան»:

**Զէ՞՞ որ հրեշտակները Աստուածոյ ծա-  
ռայող հոգիներ են եւ իր կողմէ կը  
զրկուին օգնելու համար անոնց՝ որոնք  
փրկութիւնը պիտի ժառանգեն:**

**ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԻՆ  
ԸՍ ՂՈՒԿԱՍԻ  
(17.1-10)**

**Յ**իսուս իր աշակերտներուն  
ըսաւ. «Գայթակղութիւններ  
անպայման որ պիտի պատահին, բայց  
վա՛յ այն մարդուն, որուն ձեռքով

ուրիշներ գայթակղութեան մէջ կ'իյնան:  
Նախընտրելի պիտի ըլլար որ իր զգին  
ջաղացքի քար անցընէին եւ զինք ծովը  
նետէին, քան թէ այս փոքրիկներէն  
մէկը գայթակղեցնէր: Հետեւաբար  
զգուշացէ՞ք: Եթէ եղբայրդ մեղք գործէ՝  
յանդիմանէ զինք, եւ եթէ զղջայ՝ ներէ  
իրեն: Նոյնիսկ եթէ մէկ օրուան մէջ  
եօթն անգամ քեզի գալով ըսէ՝ կը  
զղջամ, պէտք է ներես իրեն»:

Առաքեալները ըսին Տիրոջ. «Աւելցո՞ւր  
մեր հաւատքը»: Յիսուս ըսաւ. «Եթէ  
մանանեխի հատիկին չափ հաւատք  
ունենաք եւ ըսէք

**«Եթէ  
մանանեխի  
հատիկին  
չափ հաւատք  
ունենաք եւ ըսէք  
այս թբենիին,  
“արմատախի՛լ  
եղիր եւ ծովուն  
մէջ տնկուէ”,  
վստահ եղէք  
որ պիտի  
հնազանդի  
ձեզի»:**

«Ենթագրենք որ  
ձեզմէ մէկը ծառայ մը  
ունի, որ հողագործ  
է կամ հովիւ: Երբ  
ծառան դաշտէն դառնայ եւ տուն  
մտնէ, տէրը իրեն կ'ըսէ՞: “Անմիջապէս  
գնա՛, ճաշդ կեր”: Բնականաբար՝ ո'չ:  
Ընդհակառակը, անոր կ'ըսէ. “Ընթրիքս  
պատրաստէ” եւ գոգնոցդ կապելով  
սպասարկէ ինծի, մինչեւ ընթրիքս  
վերջացնեմ. անկէ ետք կրնաս ուտել  
եւ խմել”: Կը կարծէ՞ք որ տէրը իր  
ծառային երախտապարտ պէտք է ըլլայ  
իր հրահանգները կատարելուն համար:

**Չեմ կարծեր: Դուք ալ նոյնպէս, երբ  
կատարէք ի՛նչ որ հրամայուած է ձեզի,  
ըսէք. “Անպիտան ծառաներ ենք, ինչ որ  
պարտաւոր էինք ընել՝ կատարեցինք”»:**